ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 257-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,25197ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, ***որոշում եմ՝***

Ճանաչել, Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Յուրիկ Շավարշի Աղախանյանի և Ալվարդ Նորայրի Նազարյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0,25197հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-004-0047-0009, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 258-Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԵՆՐԻԿ ՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶ 21214-121-40 ՄԱԿՆԻՇԻ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.04.2026 թվականի թիվ 057-Ա որոշումը, էլեկտրոնային համակարգի միջոցով 2026թվականի հունիսի 22-ին կայացած աճուրդի արձանագրությունը՝ որոշում եմ.

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող ՎԱԶ 21214-121-40 մակնիշի 121ԼԼ70 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենան (նույնացման համարը՝ XTA212140D2129238) 1 065 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Հենրիկ Մեսրոպի Ռուստամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 259-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի 1-ին փողոց, 17 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-036-0034-0002, հողամասի չափը՝ 0,5հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Հակոբ Գամառնիկի Թադևոսյանին, Խաչիկ Հակոբի Թադևոսյանին և Կարինե Լևուշի Մինասյանին համասեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության օժանդակ կառույցները՝ 174քմ. (ամառային խոհանոց՝ 22,8քմ., ամառային խոհանոց բ/պ կամ ա/հ՝ 36,5 քմ., ամառային խոհանոց բ/պ կամ ա/հ՝ 17,1 քմ, ամառային խոհանոց բ/պ կամ ա/հ՝ 11,5 քմ, օժանդակ շինություն՝ 36քմ., ավտոտնակ՝ 22,8քմ. ծածկ՝ 27,3քմ.) ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված են ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2026U76XKR:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Հակոբ Թադևոսյանին վճարելու 1 քմ.՝ 445.8 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության օժանդակ շինությունների համար՝ ընդամենը 77 570 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման

նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355003451:
5. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /**ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 260-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0633ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 -րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, որոշում եմ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Գագիկ Զավենի Ավագյանին և Լուսինե Օնիկի Սարգսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0041-0013, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) 0,0633ա հողամասը վերահասցեավորել ՀՀ ՎՁՄ Արենի համայնք, գ. Արենի 17-րդ փողոց, 7 անասնաշենք՝ նախկինում տրամադրված Արենի 17-րդ փողոց 17 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 261-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,12989ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն, 29.12.2005թ. N 2387-Ն որոշումները և քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0095-0015, հողամասի չափը՝ 0,12989հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Մուրադ Վասպուրակի Միքայելյանին, Օֆելյա Պուշկինի Զաքարյանին, Կարեն Մուրադի Միքայելյանին և Արթուր Մուրադի Միքայելյանին համասեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել հետևյալ հասցեն ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 32-րդ փողոց 28 բնակելի տուն:
2. Վերոնշյալ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 42,1քմ. ճանաչել օրինական:
3. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2026RFE9DE:
4. Առաջարկել կառույցն իրականացրած Մուրադ Միքայելյանին և մյուսներին վճարելու 1 քմ.՝ 1028 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունների համար՝ ընդամենը 43 279 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով

հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355003451:
6. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
7. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 262-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01874Ա ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, Հայաստանի Հանրապետության 16 դեկտեմբերի 2021թվականի ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 05. հունվարի 2022թվականի թիվ 14-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշումը. ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.01874 հա (ծածկագիրը՝ 10-006-0095-0018-ից, գործառնական նշանակությունը՝ այլ հողերի) հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վերոնշյալ հողամասին և շինությանը տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, համայնք Արենի, Աղավնաձոր 32-րդ փողոց 28/1 բնակելի տուն:
3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0095-0018-ից, հողամասի չափը՝ 0.01874 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները՝ 181,2քմ՝ (բնակելի տուն՝ 1-ին հարկ՝ 78,4քմ., բաց պատշգամբ՝ 1-ին հարկ՝ 16,5քմ., բնակելի տուն՝ 2-րդ հարկ 79,1քմ., բաց պատշգամբ՝ 2-րդ հարկ՝ 7,2քմ.) համարել Արենի համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը):

4. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 20262DQF6Y:
5. Առաջարկել Արենի համայնքի ավագանուն սույն որոշման 3-րդ կետում նշված օրինականացված բնակելի նպատակային նշանակության շինությունները՝ 181,2 քմ. և 0.01874 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Մուրադ Վասպուրակի Միքայելյանին և առաջարկել նրան.

1) վճարելու 1ք.մ.՝ 3084 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 181,2 քմ. բնակելի նպատակային նշանակության շինությունների համար՝ ընդամենը 558 821 ՀՀ դրամ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

2) վճարելու 0.01874հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 148421 ՀՀ դրամ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 33.1 կետի ա/ ենթակետը:

3) վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

6. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,

7. Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.01874հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 263-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌԱՖԻԿ ՎԻՐԱԲԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,6305ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության, 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն և 19.03. 2015 թվականի N 596-Ն, 29.12.2005թ. N 2387-Ն որոշումները, Արենի համայնքի ավագանու 14.05.2026թվականի թիվ 064-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ռաֆիկ Վիրաբի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6305հա գյուղատնտեսական նպատակային նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0143-0014, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծարան կառուցելու նպատակով:

2. Վերոնշյալ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արփի 10-րդ փողոց, 1-ին նրբանցք, 5 հողամաս:

3. Կառուցապատող Ռաֆիկ Մինասյանի սահմանված կարգով տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է՝ ՆԹ-7437-26:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 264-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՍԼԱՎԻԿԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,13722ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Սլավիկի Տիգրանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0.13722 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0008, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով 4 հողամասերին տրամադրել հետևյալ հասցեները՝

1) 0,03457 հա հողամասին (հատված 1) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 3 հողամաս,

2) 0,03448 հա հողամասին (հատված 2) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 3/1 հողամաս,

3) 0,03415 հա հողամասին (հատված 3) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 3/2 հողամաս,

4) 0,03402 հա հողամասին (հատված 4) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 3/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2026թվականի N 265-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,14723ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Հովհանես Արշակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0.14723 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0009, գործառնական նշանակությունը ՝ բնակելի կառուցապատման) հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով 4 հողամասերին տրամադրել հետևյալ հասցեները՝

1) 0,03687 հա հողամասին (հատված 1) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5 հողամաս,

2) 0,03672 հա հողամասին (հատված 2) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5/1 հողամաս,

3) 0,03684 հա հողամասին (հատված 3) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5/2 հողամաս,

4) 0,03680 հա հողամասին (հատված 4) տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա 17-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 266-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ԱՐԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Ա.Վարդանյանի լիազորված անձ Էմին Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել ժառանգորդ Արթուր Արայի Վարդանյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը:

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 267-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԱՆ ՄՀԵՐԻ ԵՆՈՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում Արման Ենոքյանի կողմից իր սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ պարզեց որ.

Արման Միերի Ենոքյանը (հաշվառման հասցե՝ Արենի համայնք, Արենի բնակավայր 18 փ.տ.13) կատարել է իրավախախտում, որը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, այն է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի՝ կադաստրային ծածկագիր 10-008-0039-0018, բնակավայրերի նշանակության 0.06864 հա հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելը:

Վերոգրյալ իրավախախտման կապակցությամբ Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սմբատ Սարգսյանի կողմից ներկայացված ինքնակամ կառույցի շինարարության տեղեկացման 15.06.2026թ. զեկուցագրի և ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության 11.06.2026թ. թիվ 81-576 գրության հիմքով 16-ը հունիսի 2026 թվականի Արենի համայնքի ղեկավարի թիվ 247-Ա որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի հիմքերով Արենիի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սմբատ Սարգսյանի 15 հունիսի 2026 թվականի զեկուցագիրը:

2. ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության 11.06.2026թ. թիվ 81-576 գրության
3. Արենի համայնքի ղեկավարի 16.06.2026թ. թիվ 247-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի ընթացիկ փուլի 30.06.20026 թ-ին կազմված թիվ 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը հաստատված եմ համարում հետևյալը՝ Արենի համայնքի բնակիչ Արման Միերի Ենոքյանի կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, իր սեփականություն հանդիսացող հողամասում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ինքնակամ կառուցված շինության նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք:

Արենի համայնքի Արենի բնակավայրի փողոց 18 թիվ 13 հասցեում գտնվող, իր սեփականություն հանդիսացող, կադաստրային ծածկագիր 10-008-0039-0018 բնակավայրերի նշանակության 0.06864 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ շինությունը փաստացի կառուցվել է ապօրինի, քանի որ շինությամբ ծանրաբեռնված հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ քաղաքաշինական նորմերով սահմանված փաստաթուղթ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2026 թվականի հունիսի 16-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026թ-ի հունիսի 30-ին հրավիրվել է լսում, որին մանսակցելու նպատակով Ա.Ենոքյանը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել լսումներին:

Սույն գործի շրջանակներում ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին.
Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են ենթակա է քանդման, իսկ հողամասը նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով:

Տվյալ պարագայում Արման Ենոքյանը (հաշվառման հասցե Արենի համայնք, Արենի բնակավայր փ. 18 տ. 13/) Արենի համայնքի Արենի բնակավայրի իր սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր 10-008-0039-0018 բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 0.06864 հա հողամասի վրա առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ ապօրինի իրականացրել է ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից,՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինգապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ՝

1. Արենի համայնքի բնակիչ Արման Միերի Ենոքյանի նկատմամբ նշանակել տուգանք 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի իր սեփականություն հանդիսացող՝ կադաստրային ծածկագիր 10-008-0039-0018 բնակավայրերի նշանակության 0.06864 հա հողամասում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սույն որոշմամաբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066:
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումը կարող է սահմանված կարգով բողոքարկվել վարչական մարմնին և ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**